ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի սեպտեմբերի 10- 12-ը

ք. Սալոնիկում /Հունաստանի Հանրապետություն / գործուղման արդյունքների մասին

1. Անուն, ազգանուն՝

Հովհաննես Ազիզյան,

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետը՝

ք. Սալոնիկ, Հունաստանի Հանրապետություն, 2017 թվականի սեպտեմբերի 10-ից 12-ը

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողով և Հունաստանի Հանրապետության էկոնոմիկայի և զարգացման նախարարություն

5. Գործուղման նպատակը՝

2017 թվականի սեպտեմբերի 11-ին ք. Սալոնիկում (Հունաստանի Հանրապետություն) Հունաստանի տնտեսական համաժողովի՝ ամենամյա միջազգային ցուցահանդեսի շրջանակներում կայանալիք «ԵԱՏՄ - Հունաստան» գործարար համաժողովին մասնակցություն:

6. Քննարկված թեմաները՝

Միջոցառման շրջանակներում կայացել են լիագումար նիստ և եվրասիական հարցերով կլոր սեղան-քննարկումներ, մասնավորապես՝ «ԵԱՏՄ շրջանակներում մաքսային և տեխնիկական կանոնակարգում», «ԵԱՏՄ - Հունաստան գործարար երկխոսության համար նոր հնարավորություններ», «Համագործակցություն արդյունաբերության քաղաքականության, ագրոարդյունաբերական համալիրի և գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման ոլորտում», «ԵԱՏՄ անդամ – պետություններ և Հունաստան գործարար համայնքների հաղորդակցման պայմանների ստեղծման և համագործակցության խորացման ուղիներ» թեմաներով:

Կլոր սեղանների շրջանակներում քննարկվել են նաև մի շարք կարևոր հարցեր, այդ թվում՝ գյուղատնտեսական և արդյունաբերության արտադրության, ԵԱՏՄ երկրներ մատակարարվող արտադրանքի հարմարվողականության մասով փոխգործակցություն, ինչպես նաև ԵԱՏՄ-Հունաստան արտաքին տնտեսական փոխգործակցության նոր մակարդակի ձևավորման համար նորարարական գաղափարների բացահայտում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Միջոցառման շրջանակներում ելույթ են ունեցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ներկայացուցիչներ, ԵԱՏՄ անդամ-պետությունների պաշտոնատար անձիք, ինչպես նաև ԵՏՀ կոլեգիայի նախագահ Տ. Սարգսյանը և Հունաստանի Հանրապետության վարչապետ Ա. Ցիպրասը, որի ընթացքում բազմիցս նշվել են գործարարների համար նոր հնարավորությունների և պայմանների ստեղծման, համաշխարհային տնտեսության զարգացման նոր միտումները:

8. Գործուղվող՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների
նախարարի տեղակալ
Հովհաննես Ազիզյան

9. Ստորագրություն, ամսաթիվ

14.09.2017 թ.